Դաս 7. Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհի տարածքով՝ մայրաքաղաքներ, բերդեր և ամրոցներ, եկեղեցիներ

Հետաքրքիր փաստեր հայոց մայրաքաղաքների մասին

- *Ք. ծ. ա. 189 թ. Արմավիրում է թագադրվել Արտաշեսյան արքայատան հիմնադիր Արտաշես Ա հայոց արքան:*
- *Վան քաղաքի անունն առաջացել է Վանա լճի արևելյան մասում գտնվող Բիայնա երկրամասի անունից, որը նշանակել է ապրելու տեղ, «բնակավայր»:*
- *Երվանդաշատ քաղաքի կառուցումը հավաստում է, որ այն մեծ ուրախություն և հրճվանք է պատճառել Երվանդ 4-րդ թագավորին, և նա արքայական նոր ոստանի կառուցումը նշանավորել է մեծ փոնախմբությամբ (Երվանդաշատ նշանակում է Երվանդի ուրախություն):*
- *Վաղարշապատն ունեցել է 4 դարպաս աշխարհի 4 կողմերին համապատասխան, որոնցից ամենանշանավորը արևելյան՝ «Արեգ դուռն» կոչվող դարպասն էր:*
- *Դվինը վրաց անանուն ժամանակագրության մեջ անվանվել է «Հռչակավոր և մեծ» քաղաք:*
- *Բանասեր Նորայր Բյուզանդացին կելտերեն լեզվի մեջ հայտնաբերել է «դուն» բառը, որը Դվին բառի նման նշանակել է բլուր:*
- *Մայրաքաղաք Անիի «սրբորգեղեցիկ Անի» թաղամասը, որտեղ ապրում էին մարդիկ, բաղկացած էր բնական և արհեստական հարյուրավոր քարանձավներից, որոնցում եղել է շուրջ 30 եկեղեցի:*
- *Երևանն ընդգրկված է ամենաանվտանգ քաղաքների հարյուրյակում:*